ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՆԱՏՈՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան **03 Հոկտեմբերի 2016թ.**

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի՝ մի կողմից <<Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի>> ամբիոնը և մյուս կողմից Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը, ի դեմս տնօրեն Լ.Ասրյանի, կնքեցին սույն գործնական համագործակցության համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի <<Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի>> ամբիոնը և մյուս կողմից Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի տնօրինությունը հայտնում են իրենց պատրաստակամությունը նպաստելու՝
   - ադապտիվ ֆիզիկական դաստիարակության զարգացմանը,
   - գիտահետազոտական աշխատանքների, մասնագիտական պրակտիկայի կազմակերպմանն ու իրականացմանը,
   - առողջարարական և վերականգնողական ոլորտում ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի պրոպագանդմանը,
   - առողջարարական, ֆիզիկական-վերականգնողական տարբեր միջոցառումների համատեղ կազմակերպմանը,
   - ադապտիվ և վերականգնողական-ֆիզիկական կուլտուրայի համատեղ ուսումնական ծրագրերի մշակմանը, ներդրմանը, զարգացմանն ու հետագա կատարելագործմանը:
2. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի <<Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի>> ամբիոնը և Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի տնօրինությունը համաձայնեցին՝
   - մասնակցել սույն համաձայնագրի իրականացման աշխատանքներին, երկկողմ կազմակերպված հանդիպումներին, քննարկումներին, միջոցառումներին, հետազոտություններին, կոնֆերանսներին, գիտաժողովներին, սեմինար խորհրդակցություններին և այլն,
   - տրամադրել համատեղ հետազոտությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ սույն համաձայնագրի իրականացմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն:
3. Սույն համաձայնագրի փոփոխությունները և լրացումները կկատարվեն կողմերի համաձայնությամբ:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոնի վարիչ՝

Ս.ՀՈՎԵՅԱՆ

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը, տնօրեն՝

Լ.ԱՍՐՅԱՆ